

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**Ո՛Վ ՄԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑՈՒՐ  
ԶԱԿԻԴ ՀԵՏ**

Մայր մը, որ ժամանակ չանցնեք գալակին հետ իր գալակը չի կրնար իրեն կապուած մնալ, երբ մեծնայ: Կան մայրեր, որոնք հեռատեսիլի հետ աւելի ժամանակ կ'անցնեն քան իրենց գալակներուն հետ: Կան մայրեր որոնք իրենց ընկերուհիներուն եւ իրենց «ըսի-ըսաւ»-ներուն հետ աւելի ժամանակ կ'անցնեն քան իրենց գալակներուն հետ:

Կին մը մայր չ'ըլլար, երբ գալակ կը բերէ աշխարհ, այլ՝ մայր կ'ըլլայ, երբ իր գալակին մայրութիւն կ'ընէ: Իսկ մայրութիւն ըսելով կը հասկնամ՝ կատարեալ հոգատարութեան ու գորովի, եւ ամբողջական սիրոյ ու խանդաղատանքի ցուցաբերում իր գալակին հանդէպ:


Հոգեբաններ կ'ըսեն, թէ մօրը եւ հօրը սէրը չվայելող մանուկը, երբ մեծնայ՝ դժուարութիւն կ'ունենայ ուրիշը սիրելու:

Եսայի մարգարէն կը խօսի իրենց գալակները հանգստացնող մայրերու մասին (66.13): **Զաւակ մը ի՛նչպէս կը հանգստանայ, այլ խօսե՛ով, ի՛նչպէս հոգեկան հանգիստ ու երջանկութիւն ձեռք կը ձգէ, եթէ ոչ մօրը սիրովն ու քաղցրութեամբ: Այո՛, մօր մը սէրն է, որ հոգիի ու սրտի հանգստութիւն ու խաղաղութիւն կը պարգեւէ իր գալակին:**

Յարգելի մայրեր, ժամանակ անցուցէ՛ք ձեր գալակին հետ, անիմաստ զբաղումները կեանքին մէջ ժամանակաւոր են: Զեր գալակները ձեր գանձերն են: Տէր եղէ՛ք եւ ժամանակ տրամադրեցէ՛ք ձեր գալակներուն:

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ**



**ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՅՑԱՏՈՒՄԸ**

**2.- Պատրաստութիւն ընծաներուն**

**Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

Եւ ապա մաղզման դնելով Սկիհին վրայ, նշխարն ու զինին միասնաբար երեք անգամ կ'օրհնէ եւ կը խնդրէ երկնաւոր Հօրմէն, որ Յիսուս Քրիստոսի Մարմին եւ Արեան փոխարկէ զանոնք.-

«Սուրբ Հոգիին միջոցաւ այս Հացը ու Գինին օրհնէ՛ եւ ճշմարտապէս մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արինը դարձուր, Սուրբ Հոգիով փոխարկելով զանոնք»:

Իրագործուած է հանճարահարաշ աստուածային Սուրբ Խորհուրդը, Աստուածորդին ներկայ է Ս. Սեղանին վրայ՝ որպէս հաղորդութիւն բաշխուելու. ներկայ է՝ որպէս առհաւատչեայ նորոգեալ եւ յարուցեալ կեանքի. ան կը ճառագայթէ Ս. Սեղանէն՝ պատարագիչ քահանային հետեւեալ խօսքերով.-

«Որպէսզի ասիկա բոլոր մօտեցողներու համար առիթ ըլլայ դատապարտութենէ զերծ մնալու եւ մեղքերուն ու թողութեան համար»:...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՒՔԻ ԽՄ ՆՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024 ԹԻԻ 38

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 14. 3-17: Բ. Կր. 10. 18-11,10: Մր. 10.1-12

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ  
10.1-12**

Յիսուս Կափառնայումէն Հրէաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցան, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ո՞ւրեք մէկը իրատունք ունի՞ իր կինը արձակելու»:

Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»:  
Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»:

Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդէռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. "Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Ուստի, ո՞ւրեք մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

**ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԵՌՈՒ ԿԸ ՊԱՇԷ ԶԱՐԻՔԸ**

Եթէ Իմաստութիւնը միշտ ներկայ ըլլայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ համար օգտակար նկատես, այն ատեն բարի խորհուրդները քեզ պիտի պահեն եւ մաքուր մտածումները քեզ պահպանեն, որպէսզի քեզ փրկեն չար քանապարհէն եւ նենգամիտ մարդէն: Վա՛յ անոնց, որոնք ուղիղ քանապարհը թողած՝ խաւար քամբանքէ կը փայնեն, որոնք կ'ուրախանան չարիք գործելով եւ կը խնդան դէպի չարը խոտորելով: (Ս.Ոսկ Բ. 10-14):

**ՃՐԱԳ ԸԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ -  
Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ  
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քինյ. Սարգիսեան**

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՄՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՅՆ՝ ՓԵՓՐՈՆԵԱՅ ԵՒ ՄԱՐԻԱՆԵԱՅ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ՝ ԴԱՏ ԵՐ ՄԵԾԻ ՎԱՐԴԱՆԱՅ

\*\*\*\*\*

#### ՓԵՓՐՈՆԵԱՅ ԿՈՑՍ

Մատաղ տարիքին Մծբին կուսանոցին կը նուիրուի Փեփրոնեայ եւ կը յանձնուի Բրիտնիա անունով կուսանոցի հոգեւոր առաջնորդի խնամքին: Ան կը յատկանշուէր իր գեղեցկութեամբ եւ ֆրիստոնէական բարձր վարքով:

Դիոկղետիանոս կայսրի հալածանքներու շրջանին, երբ հալածիչները կը դրկուին Մծբին, փրկելու համար կուսանոցի կոյսերը, գաղտնի միջոցներով կը փախցնեն զիրենք ապահով թափառողներ: Սակայն Փեփրոնեայ կոյս հիւանդ ըլլալով չի կրնար տեղէն շարժիլ եւ թագնուիլ: Ուստի կը մնայ կուսանոցին մէջ, իր հետ ունենալով Բրիտնիա հոգեւոր առաջնորդը եւ Թուամայիս անունով կոյս մը: Հալածիչները շալկելով Փեփրոնեայ կոյսը դատաւորին առջեւ կը հանեն, որ բազմաթիւ խոստումներ ընելով կը փորձէ համոզել կոյսը ուրանալու ֆրիստոնէութիւնը եւ ամուսնանալու դատաւորին կողմէն գտնուող Կիւսիմաֆոս անունով երիտասարդին հետ, որու մայրը ֆրիստոնեայ ըլլալով, գաղտնաբար ֆրիստոնէական դաստիարակութիւն ստացած էր:

Փեփրոնեայ կը մերժէ առաջարկը եւ յանձն կ'առնէ նահատակուիլ, քան թէ իր սուրբ կրօնքը ուրանալ: Ուստի դատաւորին հրամանին վրայ նախ ոտքերն ու ձեռքերը կը կտրեն եւ ապա գլխատելով կը նահատակեն գայն:

Այս դէպքին վրայ դատաւորը կը խելագարի եւ գլուխը սիւնին գարնելով կը մեռնի, իսկ Լիւսիմաֆոս երիտասարդը խորանալով իր հաւատքին մէջ, պատուով թաղել կու տայ կոյսին մարմինը Մծբինի կուսանոցին մէջ:

#### ՄԱՐԻԱՆԵ ԿՈՑՍ

3-րդ դարու ապրած Մարիանէ կոյսը փոքր տարիքէն մօրը կողմէ որբացած հեթանոս ֆուրմի դուստրը եղած է:

Երբ Մարիանէի մայրը կը մեռնի, հայրը զինք կը յանձնէ ֆրիստոնեայ ստնտուի մը, որ Ֆիզիքականի գուգահեռ հոգեպէս կ'աճեցնէ զինք ֆրիստոնէական առողջ դաստիարակութիւն տալով: Մարիանէ, երբ կը մեծնայ, հայրը կը փափաքի նուիրել զինք հեթանոս չաստուածներուն, որպէս ֆրուուի: Սակայն Մարիանէ կը մերժէ ենթարկուիլ եւ կը յայտնէ իր ֆրիստոնէական հաւատքը: Հայրը սաստիկ գայրանալով, տունէն դուրս կը վտարէ կոյսը, որ մեծ ուրախութեամբ կը փութայ մանկութեան ստնտուի եւ անոր քով մնալով, հովուութեամբ կը զբաղի:

Օր մը, հովուութեան ընթացքին Մարիանէ կը ձերբակալուի որպէս ֆրիստոնեայ եւ բազմաթիւ չարչարանքներու ենթարկուելէ ետք կը գլխատուի շուրջ 275 թուականին:

#### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Մենք պետք է միշտ Աւետարանի խրատով դաստիարակուինք՝ լուսաւորուելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կտակարաններու մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Հոգիի շնորհքներէն: Ուստի դարձիք վայրապար քննութենէ եւ ընթանանք Սուրբ Գիրքի՝ Հին եւ Նոր Կտակարաններուն խրատներով: Սուրբ Գիրքերը մեր Վարդապետներն են: Անոնց միջոցաւ ընդունինք յաւիտենական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր:

Գրիգոր Լուսաւորիչ

## ՀՈԳԵՒՈՐ ԴԱՏ ԳԱՍ

### ԺԱՄԱՆԱԿ ԶՈՒՆԻՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՅՆԵԼՈՒ

«Ամէն բանի ժամանակը կայ» (Ժդ. 3.1): Հակառակ Աստուածաշունչի այս հաստատումին, մարդիկ ամէն բանի ժամանակ կը տրամադրեն, ամէն բանի համար ժամանակ ունին, բայց իրենց Տիրոջ ու Աստուծոյն համար ժամանակ չունին: Երբ մարդոց կը թելադրենք Աստուածաշունչ կարգալ կամ աղօթել, անմիջապէս կը պատասխանեն. «Շատ զբաղած եմ, շատ, ժամանակ չունիմ»:

#### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ո՛րվ սիրելի զբաղած մարդ, ժամանակ չունի՞ս ժամանակի Տուրքին ու Ստեղծիչին հետ ժամանակ անցնելու: Ժամանակ չունի՞ս Փրկիչիդ հետ աղօթելու խօսակցելու: Ժամանակ չունի՞ս փրկութեանդ գիրքը՝ Աստուածաշունչը կարդալու: Եթէ սիրած ընկերդ կամ ընկերուհիդ քեզի նամակ մը դրկէ՞ր՝ ժամանակ պիտի չունենայի՞ր գանիկա կարդալու: Եթէ ոեւէ մէկը որուն դուն կը սիրես, ուզէր քիչ մը ժամանակ անցնել հետդ՝ ժամանակ պիտի չտրամադրէ՞ր իրեն: Բոլոր սիրելիներուդ ժամանակ ունիս, իսկ Աստուծոյ ժամանակ չունի՞ս: Միթէ չե՞ս սիրեր զԱստուած:

#### ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍԱԸ

Սուրբ Հոգիի արդիւնքներն են՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ապնութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեւոթիւն, ժուժկալութիւն:

Գաղատացւոց 5.22-23

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

### ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՒԻՐՈՒՎՑ ՈՒՄՏԱՎԱՅՐ ՄԸ Կ՛ԱՅՅԵԼԵՍ, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 60

Լսէ՛ հեծեծանքս, ո՛րվ Աստուած, մտի՛կ ըրէ աղօթքս: Տունէս հեռու եւ յուսահատ՝ օգնութեանդ կը դիմեմ. դո՛ւն պիս կրնաս առաջնորդել փրկութեան ժայռէն, որուն հասնիլը ուժերէս վե՛ր է: Արդարեւ իմ ապաւէնս ես դուն, թշնամիին դէմ իմ հպօր աշտարակս: Պիտի ուզէի յաւիտենապէս քու յարկիդ տակ բնակիլ, եւ թելերուդ հովանիին ապաւինիլ:

Դուն լսեցիր իմ աղօթքս, ո՛րվ Աստուած, եւ ինձի տուիր այն ժառանգութիւնը, որ կը վերապահես քեզմէ՝ ակնածողներուն: Երկար կեա՛նք տուր թագաւորին, երկար տարիներ՝ սերունդէ սերունդ: Թող յաւէտ գահակալէ Աստուծոյ ներկայութեան, քու սէրդ եւ հաւատարմութիւնդ միշտ պահապան ըլլայ իրեն:

Ես նուագով անդադար քե՛ւ պիտի ներբողեմ, եւ օրը օրին իմ ուխտերս պիտի կատարեմ, ո՛րվ

Որդեա՛կ, պահէ՛ իմ թելադրութիւններս եւ պատուիրաններս հոգովդ մէջ դրոջմէ: Որդեա՛կ, պատուէ՛ Տէրը եւ զօրացի՛ր. բացի Տիրոջմէ ոչ ոքէ երկիւղ ունեցի՛ր:

Որդեա՛կ, պահէ՛ իմ պատուիրաններս եւ դուն պիտի ապրիս. պահէ՛ թելադրութիւններս աչքիդ քիքին պէս:

Չանոնք մատներուդ կապէ եւ սրտիդ տախտակին վրայ արձանագրէ, ըսէ՛ իմաստութեան, որ քոյր դառնայ քեզի. ծանօթացի՛ր գիտութեան, որպէսզի անոնք քեզ պահեն օտար եւ չար կնոջմէ, երբ ան իր խօսքերով կը փորձէ քեզ հրապուրել: Առակ 7